ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴՈԼԼԱՐԻ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԿՐԱԽԸ

Հեղինակի հիմնական գաղափարները: Հոդվածում ներկայացվում է ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական համակարգի ազդեցությունը աշխարհի գրեթե բոլոր պետությունների ֆինանսական համակարգի վրա:Հեղիանակը շեշտում է,որ թեև ԱՄՆ-ի աշխարհի միակ պետությունն է,որ ունենալով բյուջեյի ճեղքվածք պարքով գումար է տալիս այլ պետություններին դրանից ստանալով ահռելի տոկոսներ: Այս համատեքստում հեղիանակը համեմատություն է անում Հին Հռոմի և ԱՄՆ-ի վարած ֆինանսական քաղաքականության արդյունքները և երկուսի դեպքում էլ այն արվում էր պետությունը ծանր ֆինանսկան ճգնաժամից փրկելու համար:

Այս հոդվածում հեղանակը շեշտում է,որ ԱՄՆ-ը երբ ունենում է ֆինանսական խնդիր դիմում է արտաքին թալանի,համաձայն եմ,բայց իմ կարծիքով այս գործում մեծ դերակատարություն ունի նաև այս թալանին մասնակացող իրենց կամքով կամ իրենց կամքին հակառակ Եվրոպական մի շարք պետություններ (Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան, Իտալիա և այլն), որոնք իմ պատկերացմամբ, իրենց տնտեսությունները սխալմամբ կառուցում են ամերիկյան դոլլարի աջակցությամբ:

Համաձայն չեմ այն մտքին,որ ամերիկյան դոլլարը գտնվում է կրախի եզրին,այն որքան գլորվում է դեպի անդունդի եզրին,այնքան ավելի է արժևորվում:Աշխարհի միակ արժեթուղթն է որի գույնով պայմանավորված լուծվում են շատ մեծ գլոբալ խնդիրներ,ինչպիսին է ներկայումս ամենամեծ գլոբալ ռուս-ուկրաինական խնդիրը:

Անհամաձայնություններս այն է,որ պետք է հոդվածում նաև անդրադարձ կատարվեր եվրոպական երկրների ֆինանսական կախվածությունը ամերիկյան կանաչ արժույթից և իմ համոզմամբ եկել է այն ժամանակը,որ եվրոպական պետությունները թերևս ունեն իրենց ազգային արժույթը (եվրո) պետք է ամերիկյան դոլլարին դիմադրելու գործում ունենան իրենց գործիքակազմը որով կկարողանան այն իրականցնել:

Իմ համոզմամբ ամերիկյան դոլլարը կրախում կհայտնվի, երբ աշխարհի բոլոր պետությունները իրենց ազգային հարստությունները չեն վաճառի ԱՄՆ-ին,որը ամերիկյան կանաչ «ամենափրկիչ» արժույթին ցմահ կբանտարկի ամերիկյան մայրցամաքի սահմաներից ներս:

Գյումրու թիվ 45 միջն.դպրոցի պատմության և հասարակագիտության ուսուցիչ՝ Արտակ Գևորգյան